

Հ Ր Ա Վ Ե Ր

22 փետրվարի, 2018թ.

### ԲԱՅ ՄՐՅՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՅՈՒԹՅԱՆ

«ԿԱՉԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամը, որը գտնվում է ք. Երևան, Թումանյան 24, բն. 5 հասցեում, «Մասնագիտական դասընթացներ և գործնական աշխատանք (պրակտիկա)» իրականացնելու նպատակով կազմակերպում է բաց մրցույթ:

Ծառայությունների գնումը ֆինանսավորվելու է «ԿԱՉԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամին ՄԱԿ ՓԳՀ-ից դրամաշնորհի ձևով հատկացված միջոցների հաշվին:

Բաց մրցույթին մասնակցելու իրավունք ունեն ՀՀ, ք. Երևանում գործունեություն ծավալող անձինք՝ անկախ նրանց իրավաբանական կամ ֆիզիկական անձ, այդ թվում օտարերկրացի կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Մրցույթի առարկա է հանդիսանում հետևյալ ծառայությունը՝

Մասնագիտական դասընթացների և գործնական աշխատանքի իրականացում հետևյալ ոլորտներում՝

- Տղամարդկանց վարսավիրություն,
- Պրոֆեսիոնալ դիմահարդարում և դաշվածք,
- Հոնքերի ձևավորում և կորրեկցիա (коррекция)

Մրցույթի մասնակիցը իրավունք ունի դիմել վերը նշված մասնագիտական դասընթացներից մեկից ավելին միաժամանակ:

Մրցույթի մասնակիցը պետք է ունենա նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող փաստաթղթերը հետևյալի վերաբերյալ՝

- 1) մասնագիտական գործունեության համապատասխանություն՝ վկայական, լիցենզիա,
- 2) մասնագիտական փորձառություն դասավանդման ոլորտում (օր՝ այլ կազմակերպությունների հետ համագործակցության պայմանագրեր, հուշագրեր և այլն),
- 3) Դասընթացը և գործնական աշխատանքն (պրակտիկա) իրականացնելու համար համապատասխան տեխնիկական միջոցներ՝ միաժամանակ վերապատրաստելու նվազագույնը 5, առավելագույնը 10 մասնակից, եթե կառույցը գործնական աշխատանքն (պրակտիկա) իրականացնել չի կարող իր հաստատությունում, պարտավորվում է կազմակերպել այն այլ տեղերում (ներկայացնել սեփականության վկայական կամ վարձակալության պայմանագիր),
- 4) ֆինանսական միջոցներ (ֆինանսական միջոցների առկայության մասին հավաստիացում, վարկային գծի տրամադրման մասին բանկի հետ կնքված պայմանագիր, այլ աղբյուրից ֆինանսավորման մասին կնքված պայմանագիր կամ հաշվարկային հաշիվների մնացորդների, տրամադրված ավանդների, վարկային պարտավորությունների և հաշվարկված չվճարված տոկոսների վերաբերյալ տեղեկանք տրված հայտարարությանը նախորդող ամսվա վերջին օրվա դրությամբ),
- 5) աշխատանքային ռեսուրսներ՝ աշխատանքային շուկայի մասին իրազեկված և դասավանդման փորձ ունեցող մասնագետներ (ներկայացնել որակավորման վկայական, ինքնակենսագրական նամակ, այլ):

**Ուշադրություն՝ «ԿԱԶԱ»** շվեյցարական մարդասիրական հիմնադրամի կողմից ՄԱԿ ՓԳՀ-ի ֆինանսավորմամբ կատարված ցանկացած ծառայության կամ ապրանքի գնման նկատմամբ պետք է կիրառվի ԱԱՀ-ի գրոյական դրույք: Առկա է որոշումը:

Ծառայությունների մատուցման ժամկետը հաղթող մասնակցի հետ պայմանագիրն ստորագրելուց հետո մինչև 2018թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածն է:

Նույն մասնակցի կողմից մի քանի գնային առաջարկ ներկայացնել չի թույլատրվում:

Մրցույթի մասնակիցը պետք է ներկայացնի բոլոր հարկերը ներառող գնային առաջարկ:

Մրցույթի հաղթողը կորոշվի հայտերի ներկայացման վերջնաժամկետից հետո 4 աշխատանքային օրվա ընթացքում: Հայտերի բացումը կկատարվի գնահատող հանձնաժողովի՝ (այսուհետ՝ հանձնաժողով) հայտերի բացման նիստում ք. Երևան, Թումանյան 24, բն. 5 հասցեով:

Հայտը անհրաժեշտ է ներկայացնել պատվիրատուին՝ ք. Երևան, Թումանյան 24, բն. 5 հասցեով (սեղմելով մուտքի դռան 5B կոճակը), մինչև **2018թ. մարտի 1-ը ժամը 17<sup>00</sup>-ը** և դրանք պետք է կազմված լինեն հայերեն լեզվով: Ուշադրություն՝ հիմնադրամի ոչ աշխատանքային օրերն են համարվում յուրաքանչյուր կիրակի և երկուշաբթի օրերը:

Գնային առաջարկը դրվում է ծրարի մեջ, որը սոսնձվում և կնքվում է (եթե կիրառելի է) այն ներկայացնողի կողմից:

Ծրարը և դրանում ներառված փաստաթուղթը ստորագրում է դրանք ներկայացնող մասնակիցը կամ վերջինիս կողմից լիազորված անձը:

Ծրարի վրա նշվում են՝

ա) մրցույթի կազմակերպիչի անվանումը և հայտի ներկայացման վայրը (հասցեն),

բ) մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը:

գ) մասնակցի կոնտակտային անձի էլեկտրոնային հասցեն և հեռախոսահամարը,

Հայտերի բացումը կկատարվի գնահատող հանձնաժողովի՝ (այսուհետ՝ հանձնաժողով) հայտերի բացման նիստում՝ մրցույթի հայտարարությունը հրապարակվելու օրվանից հաշված 9-րդ աշխատանքային օրվա ժամը 17<sup>00</sup>-ը, ք. Երևան, Թումանյան 24, բն. 5 հասցեում:

Հայտերի բացման նիստում հանձնաժողովը գնահատում է՝

ա) հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սույն հրավերով սահմանված կարգին և բացում համապատասխանող գնահատված հայտերը.

բ) բացված յուրաքանչյուր ծրարում սույն հրավերով պահանջվող (նախատեսված) փաստաթղթի(երի) առկայությունը.

գ) յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի համապատասխանությունը սույն հրավերով սահմանված պայմաններին:

Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ որակյալ ծառայության գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Կազմակերպությունը նախնական հանդիպում կիրականացնի հաղթող կազմակերպության կոնտակտային անձի հետ և նախնական այց կկատարի դասընթացների իրականացման վայր՝ գնահատելու պայմանները:

Մրցույթում հաղթած մասնակցի հետ պայմանագիր կնքելու մասին որոշումը պատվիրատուն հայտնում է էլեկտրոնային նամակով կամ հեռախոսով:



Հիմնադրամի տնօրեն՝

Տաթևիկ Բաղդասարյան